«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ **Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը դասավանդման ընթացքում**

ԱՌԱՐԿԱ **Մայրենի**

ՀԵՂԻՆԱԿ **Վարսենիկ Առաքելյան**

ՄԱՐԶ **Արագածոտնի մարզ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ծիլքարի Խ.Ալանյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3
Գլուխ 1----------4
Գլուխ 2----------8
Եզրակացություն----------15
Օգտագործված գրականության ցանկ---------- 17

Ներածություն

Կրթության էությունը նրա դինամիկան է ու զարգացումը նպատակներից դեպի արդյունքները, որոնք ոչ միայն կրթության, այլ նաև ուսուցման և դաստիարակության արդյունքներն են:[1]

Ժամանակակից ուսուցումը աշակերտակենտրոն է, և դասավանդման ժամանակ անհրաժեշտ է կիրառել մանկավարժական այնպիսի հնարներ և մեթոդներ, որոնք աշակերտների մեջ կսերմանեն նախաձեռնողական, ինքնուրույնության և ստեղծագործականության ունակություններ:

Աշխատանքի արդիականությունը: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կրտսեր դպրոցական տարիքը կարևոր փուլ է մարդու զարգացման համար: Սույն աշխատանքում համապարփակ ներկայացվում է կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները և մանկավարժական մոտեցման հմտությունների կարևորությունը:

Աշխատանքի նպատակը: Սույն աշխատանքի նպատակն է ուսուցիչների մեջ զարգացնել մանկավարժական մտածողությունը, նմատնանշել մեթոդների կարևորությունը և ցույց տալ, թե ինչպես է պետք մեթոդների միջոցով զարգացնել սովորողի ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները:

Աշխատանքի խնդիրները: Վերոնշյալ նպատակի իրականացման համար մեր առաջադիր խնդիրներն են՝

1. տեսական գրականության ուսումնասիրում,
2. նյութերի հավաքում, մշակում և դասակարգում,
3. մեթոդական գաղտնիքների բացահայտում,
4. խաղային մեթոդների կիրառունակության ուսումնասիրում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, երկու գլուխներից (1. «Մեթոդամանկավարժական հմտությունների կիրառումը տարրական դասարանում», 2. «Խաղային մեթոդների կիրառումը տարրական դասարանում») եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից (համակարգչային շարվածքով՝ 17 էջ):

[1] Ցու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ» հրատ., 2005, էջ 21:

Գլուխ 1. Մեթոդամանկավարժական հմտությունների կիրառումը տարրական դասարանում

Կրթության բնագավառում կարևոր և արժանահավատ դեր ունեն թե՛ ավանդական, թե՛ ժամանակակից մեթոդները, որոնց կիրառման միջոցով նախևառաջ կզարգանան և առավել կբարելավվեն սովորող-սովորեցնող փոխհարաբերությունները:

Յուրի Ամիրջանյանը և Անատոլի Սահակյանը իրենց համատեղ աշխատության մեջ, անդրադառնալով մանկավարժական մեթոդաբանությանը, նշում են. **<<Մանկավարժության մեջ մեթոդը հասկացվում է մի կողմից որպես ուսուցչի, իսկ մյուս կողմից՝ որպես աշակերտի գործունեության եղանակ: Այլ կերպ ասած, մեթոդը փոխազդեցության, փոխգործողության եղանակ է, ուսուցչի և աշակերտի աշխատանքի առանձնահատկությունների արտահայտությունն ուսուցման գործընթացում>>[2]:**

Ուսուցման գործընթացում տարբերակվում են պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ:

Ուսուցման պասիվ մեթոդներն իրենցից ենթադրում են ուսուցչի ակտիվ դասավանդման գործընթացը, որի ժամանակ աշակերտները լսողի դերում են:

Պասիվ մեթոդների կիրառման ժամանակ ուսուցիչը կկարողանա նյութն ամբողջությամբ փոխանցել աշակերտներին:

Պասիվ մեթոդներն ունեն հետևյալ սխեման.

[2] Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ» հրատ., 2005, էջ 157:

Ակտիվ մեթոդները, թերևս, առավել տարածվածն են, քանի որ դրանք ապահովում են ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունը: Սրանք ավելի արդյունավետ մեթոդներ են, որովհետև աշակերտները հնարավորություն կունենան արտահայտելու իրենց տեսակետը, ինչն էլ կնպաստի սեփական կարծիքի ձևավորմանը: Ակտիվ մեթոդների միջոցով կազմակերպվում են զրույցը, բանավեճը և այլ գործընթացներ:

Ակտիվ մեթոդները կդիտարկենք հետևյալ պատկերով.



Ինտերակտիվ մեթոդները շատ կարևոր գործառույթ ունեն, և նրանց կիրառումը նպաստում է աշակերտների ինքուրույնության և նախաձեռնողական մտածելակերպի զարգացմանը:

Ինտերակտիվ մեթոդների սխեման ունի հետևյալ տեսքը.

Աշակերտ

Ուսուցիչ

Աշակերտ

Տարրական դասարաններում առավել կիրառվում են ակտիվ կամ ինտերակտիվ մեթոդները, քանի որ հիմնականում դասավանդման գործընթացն իրականանում է զրույցի, խաղային մեթոդների, խմբային աշխատանքների միջոցով:

Խմբային աշխատանքները աշակերտին հնարավորություն են տալիս նախաձեռնող հատկանիշներ ունենալ, խմբում լինել կառավարելի, ձեռք բերել ինքնուրույն մտածելու ունակություններ, կարողանալ տեսակետ արտահայտել և ունենալ ստեղծագործական հմտություն:

Պրոֆեսոր Ա. Վ. Պետրովսկին նշում է կրտսեր դպրոցականի անձնավորության և իմացական պրոցեսների զարգացումների վերաբերյալ մի քանի դրույթներ: Ընկալման զարգացման վերաբերյալ գրում է. «Ընկալվող առարկաները վերլուծելու և տարբերակելու հնարավորությունները կապված են երեխայի գործունեության այնպիսի տեսակի ձևավորման հետ, որն ավելի բարդ է, քան զգայությունը և իրերի անմիջականորեն մատչելի առանձին հատկությունների տարբերակումը: Գործունեության այդ տեսակը, որը կոչվում է **դիտում**, հատկապես ինտենսիվորեն է ձևավորվում հենց դպրոցական ուսուցման ընթացքում»:[3]

Ուսուցումը բավական շատ մտավոր, ֆիզիկական և աշխատանքային լարվածություն ու ջանքեր է պահանջում: Այդ ընթացքում, սակայն, կատարելագործվում են տարրական դասարանի աշակերտի հիշողությունը, երևակայությունը, ուշադրությունը և մտածողությունը:

Պետրովսկին անդրադառնում է ուշադրության, հիշողության, երևակայության և մտածողության զարգացումներին. «Առաջին դասարանցիների կամածին ուշադրությունը անկայուն է, քանի որ նրանք դեռևս չունեն ինքնակարգավորման ներքին միջոցներ: Այդ պատճառով փորձված ուսուցիչը դասի ընթացքում հերթափոխում է ուսումնական

[3] Պրոֆ. Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, «Լույս» հրատ., Երևան, 1977, էջ 109:

աշխատանքի տարբեր տեսակները (տարբեր եղանակներով կատարվող բանավոր հաշվում, խնդիրների լուծում և արդյունքների ստուգում, գրավոր հաշվումների նոր եղանակի բացատրություն, դրանց ամրապնդման նպատակը հետապնդող վարժություններ և այլն)»:[4] Այնուհետև հաջորդաբար անդրադառնում է վերը նշված զարգացումներին և դրանց առանձնահատկություններին:

Գլուխ 2. Խաղային մեթոդների կիրառումը տարրական դասարանում

[4] Պրոֆ. Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, «Լույս» հրատ., Երևան, 1977, էջ 110:

Կրտսեր դպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են ընտանիք, դպրոց, ընկերներ:

Կրտսեր դպրոցական տարիքում երեխան արդեն ունակ է ճանաչելու առարկաների նմանությունը և տարբերությունը, ելնելով նրանց առանձնահատկություններից:[5]

Կրտսեր դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան սովորողների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնություն, ինչ-որ նոր բան սովորելու հակում, հետաքրքրասիրություն: Որն էլ պիտի հիմք հանդիսանա երեխայի «ես»-ի հետագա ամրացմանն ու կայունացմանը: Այս տարիքից պետք է ակտիվորեն զարգացնել երեխայի համարձակ ստեղծականությունն ու երևակայությունը, ուշադրությունն ու մտածողությունը: Այս տարիքում երեխաները հիմնականում ընկալում են զգայարանների միջոցով, ուստի կարելի կազմակերպել այնպիսի խաղեր, որոնք կլինեն տեսողական, զգայական, դիդակտիկ: Ծփվելով կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ, մենք մեր առջև դնում ենք այսպիսի մանկավարժական խնդիրներ.

Երեխան խաղալով հասկանում է ինքն իրեն, ճանաչում է իրեն շրջապատող աշխարհը, գիտելիք է ձեռք բերում ամենատարբեր հարցերի շուրջ:
Հստակ խնդիրներ և նպատակներ ունեն, հատկապես մտավոր խաղերը. զարգացնել երեխաների հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, քանի որ առանց այդ հատկանիշների անհնար է երեխային ամբողջովին զարգացնել:

Երեխայի խաղի մեջ խոր ստեղծագործական բովանդակություն կա: Խաղի մանկավարժական նշանակությունը ընդգծել և հետաքրքիր ու օգտակար մտքեր են արտահայտել Յա. Ա. Կոմենսկին, Ժ.-Ժ. Ռուսոն, Կ. Ուշինսկին, Ա. Մակարենկոն, Յա. Կորչակը և շատ ուրիշներ: Խաղի դաստիարակչական նշանակության ուսումնասիրությամբ զբաղվել են նաև հոգեբաններ, սոցիոլոգներ, փիլիսոփաներ, ազգագրագետներ, արվեստագետներ, որոնք հիանալի գիտեն երեխայի ներաշխարհը:[6]

5.Դիդակտիկական խաղերը որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության բարելավման միջոց. Ներածություն.
6. https://hi-in.facebook.com/mushmankapartez/posts/163791626217014, https://www.vsu.am/grqer/mijazgayin-gitajoxov-2019/haroyan-grigoryan.pdf

Տարրական դասարաններում սովորող աշակերտների համար դեռևս գերակշռում է **խաղը**: Առաջին դասարանում սովորող աշակերտը գտնվում է նախադպրոցական և դպրոցական փուլերի սահմանագծում, հետևաբար միանգամից չի ձևավորվում նրա գիտակցական վերաբերմունքն ուսման նկատմամբ. դրա համար հարկավոր է որոշակի տևական ժամանակ:

Որպեսզի ուսուցումը միօրինակ և հոգնեցուցիչ չլինի, օգնության են գալիս դիդակտիկական խաղերը:

Եթե տոկոսային հարաբերությամբ դիտարկենք խաղերի ու դասերի դերը կրտսեր դպրոցականի կյանքում, ապա կստանանք հետևյալ պատկերը.



Այդ պատճառով դպրոցը կրտսեր դպրոցականի համար պետք է լինի խաղերի միջոցով սովորելու և զարգանալու վայր: Ուսումնական գործընթացում կազմակերպվող

խաղերը նպաստավոր պայման են երեխայի զարգացման համար: Այդ տարիքի երեխաները պատրաստ են ամեն բան կատարել խաղի միջոցով, քանի որ նրանք խաղերում անկաշկանդ և ինքնուրույն են. իրենք որևէ խաղալիքի միջոցով հորինում են դրա վերաբերյալ մի պատմություն (սա աշակերտի մեջ ստեղծագործականություն է սերմանում), ապա խաղի մեջ ներգրավում համադասարանցիներին, ինչն էլ նախաձեռնողական հատկանիշներ է ձևավորում աշակերտի մեջ: Խաղը երեխայի մեջ զարգացնում է ինքնահաղթահարման բարդույթը և ձևավորում որպես անհատ: Ինչպես ասել է Ծ. Ամոնաշվիլին՝ «Արգելել երեխայի խաղը, նշանակում է խանգարել նրա զարգացմանը:

Խաղային մեթոդների միջոցով կզարգանան աշակերտների ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, ինչպես նաև աշակերտները ձեռք կբերեն ստեղծագործական հմտություններ, վարքագծի կառավարման ունակություններ, դիմացինին լսելու և նրա տեսակետն ընդունելու կարողություն, նաև՝ սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու միտում և այլն:

Մայրենի առարկայի որևէ պատմվածքի, բանաստեղծության կամ առակի դասավանդման ընթացքում ուսուցիչը կարող է դասապրոցեսն իրականացնել դերային խաղի միջոցով՝ համապատասխան դերերը աշակերտներին բաժանելով: Աշակերտները, իրենց զգալով տվյալ թեմայի ինչ-որ կերպարում, առավել կտպավորվեն և, այդուհանդերձ, հետաքրքրություն կունենան առարկայի հանդեպ: Բացի այդ՝ արդյունքում կունենանք խոսքի զարգացում և անկաշկանդ ինքնարտահայտվելու ունակություն:

Մաթեմատիկական վերացական աշխարհը շատ դժվար է երեխայի ուղեղին մոտ պահել, դրա համար առավել լավ տարբերակ է հստակ պատկերների միջոցով կազմակերպել դասավանդումը, քան պասիվ մեթոդների միջոցով փորձել երեխային սովորեցնել նրա համար բարդ հասկացություններ: Օրինակ՝ «Մաթեմատիկա» առարկայի ուսուցման ժամանակ ուսուցիչը կետրոնանում է աշակերտների տրամաբանական մտածողության և ուշադրության զարգացման վրա: Վերոնշյալ նպատակի իրականացման համար կան բազմաթիվ խաղային մեթոդներ, գունային պատկերներ և այլն: Օրինակ՝ կարելի է աշակերտներին տալ խորանարդաձև թղթեր, որոնց վրա գրված կլինեն հանման և գումարման օրինակներ:

Խորանարդները կարող են լինել տարբեր գունային երանգներով՝ աշակերտներին առավել գրավելու նպատակով:



Աշակերտները խորանարդների վրա կգրեն պատասխանները, ապա այն կստուգեն ամբողջ դասարանի մասնակցությամբ:

Տվյալ խաղ-դասի նպատակն է աշակերտների միտքը կենտրոնացնել և մտային ճկունության հասցնել:

Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչները յուրաքանչյուր պարագայում պետք է հաշվի առնեն կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները, հասարակության մեջ նրա վարքագծի դրսևորումները և անհատապես պետք է սկսեն ճանաչել երեխային: Վերը նշվածները կօգնեն ուսուցչին յուրաքանչյուր աշակերտին անհատական մոտեցում ցուցաբերելու, ինչպես նաև՝ երեխայի զարգացմանը նպաստող բառընտրության գործում:

Պետրովսկին գրում է. «Ուսումնական գործունեության կարևոր պահանջներից մեկն այն է, որ երեխաները պետք է կարողանան ծավալուն կերպով հիմնավորել իրենց հայտնած մտքերի ու գործողությունների ճշտությունը: Այդպիսի հիմնավորման շատ հնարներ ուսուցիչն է սովորեցնում: Դատողության նմուշները տարբերելու անհրաժեշտությունը և դրանց ստեղծման ուղղությամբ ձեռնարկվող ինքնուրույն փորձերը ենթադրում են կրտսեր դպրոցականի մոտ սեփական մտքերն ու գործողությունները կարծես դրսից, կողմնակի մարդու աչքով դիտելու և գնահատելու կարողության ձևավորում: Այդ կարողությունը ընկած է կարևորագույն մի ընդունակության՝ ռեֆլեքսիայի (իր ապրումներն ու գործողությունները վերլուծելու հակման) հիմքում: Ռեֆլեքսիան թույլ է տալիս

օբյեկտիվորեն ու խելամտորեն նպատակին ու պայմաններին դրանց համապատասխան կամ անհամապատասխան լինելու տեսակետից»:[7]

Ինչպես գիտենք, տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների գերխնդիրն է աշակերտներին նախապատրաստել որպես անհատ և սովորեցնել կազմակերպվածություն՝ ի դեմս վարքագծային կանոնների: Սակայն, նշվածներին զուգահեռ, ուսուցիչը պետք է երեխայի բազմակողմանի զարգացվածության համար հող նախապատրաստի:

Այսպես. ուսուցիչը իր առջև նպատակ է դնում մինչև տարրական կրթության ավարտը ունենալ վարքագծային կանոններին հետևող, մտածողության թեկուզ միջին մակարդակով, ուշադրության, երևակայության և հիշողության զարգացվածությամբ «պատրաստի կադրեր» միջնակարգ կրթության համար:

Այժմյան կրտսեր դպրոցականներն ունեն իրենց վիրտուալ, ժամանակակից աշխարհը, և ուսուցչի գերակա հանձնարարականն է բավարարել այսօրվա աշակերտի պահանջմունքները և ըստ դրա վերակառուցել իր ողջ մեթոդական համակարգը: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը շահադրդելի է աշակերտների համար:

Ուսուցիչը աշակերտի համար պետք է լինի ստեղծարարության, կրեատիվության, կարողունակության և գիտելիքի մոդել: Իսկ այդ «կոչմանն» արժանանալու համար յուրաքանչյուր ուսուցիչ պետք է օգտագործի իր բազայում եղած մեթոդամանկավարժական հմտությունները:

Մեթոդամանկավարժական հմտությունները կարող ենք դիտարկել հետևյալ կերպ.

7.Պրոֆ. Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, «Լույս» հրատ., Երևան, 1977, էջ 108:

Աջակցել

Լսել

Բացատրել

Համագործակցել

Մեթոդամանկավարժական հմտություններ

Ճանաչել

Տալ հնարավորություն

Վստահել

Մոտիվացնել

Քննարկել

Վերը նշված հատկանիշների կիրառման արդյունքում կզարգանան կրտսեր դպրոցականի

1. ինքնագնահատականը,
2. ինքնուրույնությունը,
3. սերը սեփական Ես-ի նկատմամբ,
4. նախաձեռնողականությունը,
5. սեփական կարծիքի արտահայտումը,
6. տեսակետի ձևավորումը,
7. ստեղծագործականությունը,
8. աշխարհայացքն ու աշխարհընկալումը,
9. մտածելակերպը և այլն:

Բազմաթիվ տեսաբաններ պնդում են, որ երեխայի ստեղծագործականության զարգացմանը նպաստում են ոչ միայն ընտանիքը, համադասարանցիները, ընկերները, այլև շրջապատի գնահատականը նրա ստեղծագործական ակտիվության վերաբերյալ: Բնականաբար ծնողները երեխային քաջալերելու նպատակով ավելի բարձր գնահատական կտան նրա ինքնարտահայտման համար, սակայն պետք է նկատել, որ մանկավարժներն այնքան էլ «խանդավառությամբ» չեն արձագանքում աշակերտների լավ արարքներին: Պատճառն ակնհայտ է. երեխան, լսելով իր մասին բարձր կարծիքներ ու բացառապես գովիչ խոսքեր, հաջորդ ինքնարտահայտման գործում կթերանա, քանի որ ենթագիտակցորեն կկարծի, որ նախորդից լավը չի կարող լինել, որովհետև այն շատ լավն էր: Մանկավարժները չափից ավելի չեն խրախուսում աշակերտին, քանի որ այն կվնասի վերջինիս ստեղծագործական անխափան դրսևորմանը:

Խաղը նաև շատ լավ միջոց է աշակերտի մեջ ինքնուրույնություն և նախաձեռնողականություն զարգացնելու համար: Նախաձեռնողականություն սերմանելու գործում կօգնի լիդերությունը: Հարկավոր է ամեն դասին մեկ աշակերտի «լիդերի պաշտոն» հանձնել:

Լիդերությունը երեխայի մոտ կձևավորի նախաձեռնողականություն և ինքնուրույնություն: Խաղն օգնում է, որպեսզի երեխան դառնա ավելի ինքնավստահ և հստակ իր որոշումներում:

Խաղային մեթոդներով ավարտվող դասաժամերը նպատակահարմար է, որ ուսուցիչը ամփոփի հետևյալ հարցադրումներով.

1. «Ի՞նչ հասկացաք այսօրվա դասից»,
2. «Ի՞նչ տպավորություններ ունեք»,
3. «Ձեզ դուր եկա՞վ խաղը, թե՞ ոչ»,
4. «Ի՞նչ կփոխեիք խաղի ընթացքի մեջ» և այլն:

Աշակերտների համար առավել պատկերավոր դարձնելու նպատակով հարմար են կիրառել հետևյալ մեթոդները.

1. Վենի դիագրամ
2. Ձրույց
3. Տ-աձև աղյուսակ
4. ԳՈՒՍ
5. Մտագրոհ
6. Ծարադրություն և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարված դիտարկումների արդյունքում եզրակացրել ենք, որ՝

1. Խաղային մեթոդների միջոցով կզարգանան աշակերտների ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, ինչպես նաև աշակերտները ձեռք կբերեն վարքագծի կառավարման ունակություններ, ստեղծագործական հմտություններ, դիմացինին լսելու և նրա տեսակետն ընդունելու կարողություն, նաև՝ սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու միտում և այլն:

2. Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչները յուրաքանչյուր պարագայում պետք է հաշվի առնեն կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները:

3. Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների գերխնդիրն է աշակերտներին նախապատրաստել որպես անհատ և սովորեցնել կազմակերպվածություն՝ ի դեմս վարքագծային կանոնների:

Բոլոր մեթոդների ճիշտ կիրառումը օգնում է սովորողին մոտիվացնելու գործում, ինչպես նաև նպաստում է վերջինիս գրավոր ու բանավոր խոսքի և մտային զարգացմանը:
Աշակերտի թե՛ ստեղծագործականությունը, թե՛ ինքնուրույնությունը և թե՛ նախաձեռնողականությունը զարգացնելու գործընթացը կախված է ոչ միայն ուսուցչից և կիրառվելիք մեթոդներից, այլ նաև ընտանիքից, ընկերներից, շրջապատից և հենց իրենից՝ աշակերտից:

Դասավանդման մեջ ինքնուրույն աշխատանքի հմտությունների ձևավորումը ներառում է ուսանողների կրկնօրինակման և վերարտադրողական գործողություններից անցում արդյունավետ և անկախ աշխատանքի: Անկախ աշխատանքի հմտությունների ձևավորման գործընթացը ոչ միայն պետք է առաջնորդվի ուսուցչի կողմից, այլև նրա կողմից լինի մշտական հսկողության ներքո:
Անկախ աշխատանքի հմտությունների ձևավորումը անձի հետագա զարգացման, նրա զարգացման, կրթության և ինքնակրթության անհրաժեշտ պայմաններից մեկն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), «Մանկավարժ» հրատ., 2005:

2. Պրոֆ. Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, «Լույս» հրատ., Երևան, 1977:

3. http://elib.gnpbu.ru/text/bozhovich_lichnost-i-ee-formirovanie_2008/